**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ**
**ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ**

ք. Երևան, Նալբանդյան 104

«10» 05 2021թ. N 20/474

**«ԷՄ ԴԻ ԷՅ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Է. Փոթոյանին**
**ք. Երևան, Աբովյան 23**

**Հարգելի պարոն Փոթոյան**

Համաձայն ՀՀ ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ Գնորդ) և «ԷՄ ԴԻ ԷՅ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև ՀՀ ԱԱԾ կարիքների համար Դեղորայքի ձեռքբերման համար 2021 թվականի հունվարի 26-ին կնքված թիվ ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԳՀԱՊՁԲ-21/1-ԴԵՂՈՐԱՅՔ/2 ծածկագրով «Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման» պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագրի) և դրա հիման վրա 15.02.2021թ. կնքված N 1 Համաձայնագրի համաձայն «ԷՄ ԴԻ ԷՅ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն պարտավոր էր ՀՀ ԱԱԾ-ին մինչև 2021 թվականի մարտի 31-ը ներառյալ մատակարարել ներքոհիշյալ ցանկի ապրանքատեսակները նշված քանակներով՝

| Չափաբաժնի համար | Ապրանքի անվանումը | Չ/մ | Միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր քանակը | Գումար /ՀՀ դրամ/ 1-ին եռամսյակ | Մատակարարման ժամանակացույց 1-ին եռամսյակ, բայց ոչ ուշ քան 31.03.2021թ. | Չմատակարարված քանակ | Ընդհանուր գումարը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 28 | Ամօքսիցիլին J01CA04 | հատ | 36,90 | 2200 | 40590 | 1100 | 1100 | 81180 |
| 38 | Սպիրոնոլակտոն C03DA01 | հատ | 35,40 | 1200 | 14160 | 400 | 400 | 42480 |
| 47 | Սուլֆամեթօքսազոլ + տրիմեթոպրիմ J01EE01, J01EE02, J01EE05, J01EE07 | հատ | 410,60 | 300 | 61590 | 150 | 150 | 123180 |
| 54 | Մետոկլոպրամիդ A03FA01 | հատ | 53,80 | 150 | 2690 | 50 | 50 | 8070 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 58 | Նիֆեդիպին C08CA05 | հատ | 7,78 | 500 | 3890 | 500 | 500 | 3890 |
| 60 | Օմեպրազոլ A02BC01 | հատ | 10,59 | 3600 | 9531 | 900 | 900 | 38124 |
| 68 | Դիֆենհիդրամին D04AA32, D04AA32 | հատ | 22,49 | 500 | 2249 | 100 | 100 | 11245 |
| 69 | Դրոտավերին A03AD02 | հատ | 56,60 | 150 | 2830 | 50 | 50 | 8490 |
| 78 | Իբուպրոֆեն C01EB16, G02CC01, M01AE01, M02AA13 | հատ | 28,20 | 3000 | 28200 | 1000 | 1000 | 84600 |
| 79 | Ամօքսիցիլին+քլավու-լանաթթու J01CR02 | հատ | 158,70 | 800 | 63480 | 400 | 400 | 126960 |
| 97 | Ատորվաստատին C10AA05 | հատ | 33,90 | 2400 | 20340 | 600 | 600 | 81360 |
| 103 | Քսիլոմետազոլին R01AA07, R01AB06, S01GA03 | հատ | 993,00 | 30 | 9930 | 10 | 10 | 29790 |
| 104 | Քսիլոմետազոլին R01AA07, R01AB06, S01GA03 | հատ | 368,00 | 300 | 36800 | 100 | 100 | 110400 |
| 105 | Կլարիթրոմիցին J01FA09 | հատ | 182,90 | 630 | 25606 | 140 | 140 | 115227 |
| 116 | Տրիմետազիդին (տրիմետազիդինի դիհիդրոքլորիդ) C01EB15 | հատ | 60,87 | 2400 | 36522 | 600 | 600 | 146088 |
| | **Ընդամենը** | | | | **358408** | | | **1011084** |

Հաշվի առնելով նշված ցանկով նախատեսված քանակների մասով ապրանքների չմատակարարման փաստը և հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը և 6.2 կետը՝ ՀՀ ԱՆԾ-ն 10.05.2021թ-ին միակողմանի մասնակի լուծում է պայմանագիրը և N 1 Համաձայնագիրը վերը նշված ապրանքատեսակների մասով:

Տեղեկացնում եմ, որ «ԷՄ ԴԻ ԷՅ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն՝ պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 6630.54 (վեց հազար վեց հարյուր երեսուն դրամ, հիսունչորս լումա) ՀՀ դրամ՝ որպես տույժ և տուգանք՝ Պայմանագրի 6.2 և 6.3 կետերի համաձայն, ինչպես նաև վերոնշյալ ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 և 900008000664 հաշվեհամարներին ենթակա են գանձման համապատասխանաբար 101108,4 (հարյուր մեկ հազար հարյուր ութ դրամ, քառասուն լումա) ՀՀ դրամ, որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում և

1011084 (մեկ միլիոն տասնմեկ հազար ութսունչորս) ՀՀ դրամ, որպես տուժանք՝ որակավորման ապահովում:

**Հարգանքով՝**

**Ա. ՀԱԿՈԲՅԱՆ**